

 Վ. Կարապետյան

ԱՌՌԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

30.08.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 27.07.2016թ.-ի թիվ 69 կարգադրությունը, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ում անցկացվեց 2015թ.-ի գործունեության ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյանի, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի, Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Կարապետյանը և հաշվապահ՝ Ս. Ավետիսյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Գնումների համապատասխանությունը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին.

ե/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Վ.Կարապետյանը Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի 8 ամսվա ներքին աուդիտորի փորձ:

<<Եղեգնաձորի ԲԿ>> Փակ բաժնետիրական ընկերություն՝ ք. Եղեգնաձոր:

Գործունեության նպատակը՝ հիվանդանոցային և արտահիվանդանոցային բուժսպասարկում:

Ընկերությունը ստեղծվել է 2006թ.-ի նոյեմբերի 2-ի «ՀՀ մարզերի առողջապահական հիմնարկների նպատակալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման համաձայն: ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.11.2013թ. թիվ 88 որոշմամբ հաստատված 12.12.2007թ. գրանցված կանոնադրության թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 26.11.2013թ., վկայականի համարն է՝ 03 Ա – 079165: ՀՀ Վայոց ձորի մարզպետի 25.08.2014թ. թիվ 70 որոշմամբ հաստատված 12.12.2007թ. գրանցված կանոնադրության թիվ 001.3 փոփոխությունը գրանցված է իրավաբա-

նական անձանց պետական ռեգիստրի կողմից 21.11.2014թ., վկայականի համարն է՝ 03 Ա - 079165, ՀՀՀՀ-08909438: Ընկերությունն ունի իր կանոնադրությունը հաստատված Պետ. Ռեգիստրի կողմից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 87000.0 հազար դրամ, որը կազմում է 435 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 200.0 հազար դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերությունն ունի ՀՀ զինանշանի պատկերով իր անվանմամբ կլոր կնիք, բանկային հաշիվ և անհատականացման այլ միջոցներ:

Հաշվապահական հաշվառումը վարվում է գլխավոր հաշվապահի կողմից:

Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքով սահմանված հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվությունների կազմելու սկզբունքները պահպանված են:

Գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման տվյալների հիման վրա՝ շրջանառության տեղեկագրում: Իրականացվում է անալիտիկ և սինթետիկ հաշվառում:

Դրամարկղային գործունեությունը իրականացվում է ՀՀ կառավարության 08.10.2003թ.-ի <<Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 1408-Ն որոշման համաձայն: Գանձապահի հետ կնքվել է նյութական պատասխանատվության վերաբերյալ պայմանագիր:

Հաստատված են ընկերության հաստիքացուցակը և ծախսերի նախահաշիվը:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը, ինչպես նաև դեղորայքի առկա մնացորդը և մատյանում հաշվառված տվյալները: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ԸՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

<< պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2015թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատեսված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	296593.6	295879.5	293927.5	293927.5	300252.8	300252.8	3659.2
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	296593.6	267363	293927.5	293927.5	300252.8	300252.8	3659.2
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	242664		239943.5	239943.5	245494.3	245494.3	2830.3
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	53929.6		53984	53984	54758.5	54758.5	828.9
գրասենյակային նյութեր և հագուստ	7074		7779.4	7779.4	7864	7864	790
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	959		932	932	873.7	873.7	-85.3
Ղեկավար. և լաբորատոր նյութեր	24969		24047	24047	25853	25853	884
Այլ ծախսեր	4821		5303.4	5303.4	5107.4	5107.4	286.4
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր	14						-14
Գործուղումներ և աշխատավարձ պայմանագր. բժիշկ.							0
Ներքին և արտասահ. գործուղումներ	180		174	174	174	174	-6
Կապի ծառայության վճարներ	1208		1177.4	1177.4	1135.6	1135.6	-72.4
Կոմունալ ծառայությունների վճար	14104.6		13920.8	13920.8	13150.8	13150.8	-953.8
Էլ. էներգիայի ծախսեր	3207		3036	3036	3237.4	3237.4	30.4
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր							0
Զրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	6675		6585.3	6585.3	6666.6	6666.6	-8.4
Այլ ծախսեր	4222.6		4299.5	4299.5	3246.8	3246.8	-975.8
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	600		650	650	600	600	0
Բանկի տոկոս		9.8					0
տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.		2103.4					0
Վճարովի ծառայութ.		24545.3					0
Այլ ծրագրեր*		1246.7					
Այլ ծրագրեր**		611.3					

24545.3 հազ.դրամ՝ վճարովի ծառայություններ /կազմակերպություններից ստացված և քաղաքացիների հետազոտության դիմաց վճարներ/:

* 1246.7 հազ.դրամ՝ տարածքի վարձակալություն՝ 614.2 հազ.դրամ և վճարովի սենյակներից ստացված գումար՝ 632.5 հազ.դրամ:

** 611.3 հազ.դրամ՝ ֆինանսների նախարարության կողմից կուտակային վճարների հետ վերադարձ:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Կոմունալ ծառայութ. վճարներ		Կապի ծառայութ.		Էլ. էներգ. ծախսեր.		Ջեռուցում / գազով /		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր			
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
Սն. 01.01. 1թ.													0.0	0.0
Շրջանառություն 201 թ.													0.0	0.0
Սն. 01.01.15թ.				84.9		130.6		331.2		1260.9		2193.4	0.0	4001.0
Շրջանառություն 2015թ.	239943.5	245494.3	1441.9	1294.8	1177.4	1135.6	3036.0	3237.4	5143.4	5371.8	43185.3	43718.9	293927.5	300252.8
Սն. 01.01.16թ.		5550.8	62.2			88.8		532.6		1489.3		2727.0	62.2	10388.5

Շահութահարկի և շահաբաժնի գծով պարտավորությունները աղյուսակում չեն արտահայտվել, քանի որ նշված պարտավորությունները, որպես ծախս չեն դիտվում: Այդ պարտավորությունների գումարը կազմում է 3615.4 հազ. դրամ /շահութահարկ՝ 3314.4 հազ.դրամ, շահաբաժին՝ 301.0 հազ.դրամ/, որը արտացոլվել է հաշվեկշռում, որպես ընթացիկ պարտավորություն:

2016թ.-ի ապրիլի 20-ի դրությամբ առ 01.01.2016թ.-ի դրությամբ 3314.4 հազ. դրամ շահութահարկի գծով պարտավորությունն ամբողջովին մարված է:

Առ 01.01.16թ. դրությամբ կազմակերպության դեբիտորական պարտքերը կազմում են 647.7 հազ.դրամ /62.2 հազ. դրամ՝ ջրի վարձ, 333.7 հազ. դրամ՝ ԱԶ <<Սամվել Ղարիբյան>> /տպագրական ձևաթղթեր/, 81.2 հազ. դրամ՝ <<Էկոլոգիա Վ.Կ.Հ.>> ՍՊԸ, 4.7 հազ. դրամ՝ <<Խաչապար>> ՍՊԸ, 61.7 հազ.դրամ՝ <<Լևոն և Լամարա>> դեղատուն, 3.4 հազ. դրամ՝ բնավճար, 2.3 հազ. դրամ՝ արտոնագրային վճար, 97.4 հազ. դրամ՝ պետական տուրք, 1.1 հազ. դրամ՝ նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ/ :Կրեդիտորական պարտքերը կազմում են 14589.2 հազ.դրամ / շահաբաժին՝ 301.0 հազ.դրամ, եկամտային հարկ՝ 5341.8 հազ.դրամ, սոց. վճար՝ 209.0 հազ.դրամ, շահութահարկ՝ 3314.4 հազ.դրամ, ԱԱՀ՝ 49.7 հազ.դրամ, նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ՝ 1.8 հազ.դրամ, էլ. էներգիա՝ 532.6 հազ.դրամ, ջեռուցում/գազով՝ 1489.3 հազ.դրամ, կապի ծառայություն՝ 88.8 հազ.դրամ, <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ին՝ 2717.0 հազ.դրամ, <<Ֆարմեգուս>> ՍՊԸ-ին՝ 62.7 հազ.դրամ, <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ին՝ 76.2 հազ.դրամ, <<Վագա-Ֆարմ>> ՍՊԸ-ին՝ 166.5 հազ.դրամ, <<Սպիտակ տուն>> ԱԿ՝ 139.7 հազ.դրամ, Կանխ. Ախտահանման ԴՓՓԸ՝ 45.0 հազ.դրամ, <<Արմեն Բրոկ>> ԲԲԸ՝ 53.7 հազ.դրամ:

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	129564	129564	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	129564	129564	0
արժեքը	129564	129564	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	45650	43389.7	-2260.3
Նյութեր	16253	16253	0
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	2439	2439	0
արժեքը	2439	2439	0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ. պարտքեր	25668	22745.7	-2922.3
որից հաշ. տրված կանխվճ.գծ.	1290	333.7	-956.3
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ. սոց. ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի հետ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ	1700	100.8	-1599.2
հաշվարկներ հաշվետու անձանց հետ	22098	22098	0
հաշվ. տարբ. դեբիտ. հետ	580	213.2	-366.8
դրամական կանխավճարներ, որից	1290	1952	662
դրամարկդ	59.5	59.5	0
հաշվարկային հաշիվ	1230.5	1892.5	662
Հաշվեկշիռ	175214	172953.7	-2260.3
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	86588	86588	0
Կանոնադրական կապիտալ	87000	87000	
Լրացուցիչ կապիտալ	8696	8696	0
Հաշվետու տար. չօգ. գույք շահ.	-9108	-9108	0
Նախ. կար. չօգ. գույք շահ.			0
Եկամ. վերաբ. շնորհ.	65761	65761	0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	9929	19779.2	9850.2
այդ թվում			0
հաշվարկ. մատակ. և կապալ. հետ	4139	5272.8	1133.8
հաշվարկներ բյուջեի հետ	600	9217.7	8617.7
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ		98.7	98.7
հաշվարկներ հաշվետու անձանց հետ	5190	5190	0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	12936	825.5	-12110.5
զալիք ժաման. եկամուտներ	12936	825.5	-12110.5
Հաշվեկշիռ	175214	172953.7	-2260.3

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը

**Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն**

առ. 01.01.2015թ. - առ 01.01.2016թ.

Ձև N 4
հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	2103.4	2103.4	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	267363.0	267363.0	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	26413.1	26413.1	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	293776.1	293776.1	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100			0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110			0.0
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	239943.5	239943.5	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Սոհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170	53984.0	53984.0	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	293927.5	293927.5	0.0
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	-151.4	-151.4	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		1952.0	1952.0	0.0

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Կատարվել է ընկերության ֆինանսական գործունեության վերլուծություն 2013թ. հաշվեկշռի տվյալների հիման վրա հետևյալ ցուցանիշների միջոցով.

1. Ֆինանսական անկախության գործակից.

$$q_1 = \frac{\text{սեփական կապիտալ}}{\text{հաշվեկշռի հանրագումար}} = \frac{86700}{175326} = 0.5$$

Այն ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այն բավարարում է այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (0.5):

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից, որը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություն ունի կազմակերպությունը:

$$q_2 = \frac{\text{փոխառու կապիտալ}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{\text{ընթ. պարտավ.} + \text{ոչ ընթ. պարտավ.}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{70500}{86700} = 0.8$$

որը չի բավարարում այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (1):

3. Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակից.

$$q_4 = \frac{\text{սեփ. կապիտալ} + \text{ոչ ընթ. պարտավ} - \text{ոչ ընթ. ակտիվ.}}{\text{ընթացիկ ակտիվներ}} = \frac{22897}{24214} = 0.9$$

Այն բավարարում է նորմատիվային փոքրագույն արժեքին (0.1):

4. Ընթացիկ իրացվելիության գործակից, որը ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը.

$$q_5 = \frac{\text{ընթացիկ ակտիվներ}}{\text{ընթացիկ պարտավորություն}} = \frac{24214}{4739} = 5.1$$

Այս ցուցանիշը բավարարում է սահմանային նվազագույն արժեքին (2):

Ֆինանսական գործունեության վերլուծությունից պարզվում է, որ ընկերությունը բավարար չափով ապահովված է ընթացիկ ակտիվներով:

Առաջարկվում է. Համապատասխանեցնել 2-րդ ցուցանիշը սահմանված նվազագույն նորմայի հետ:

Ընկերության հաստիքային միավորների թիվը՝ 181.1:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը՝ 187:

Ընդամենը նախատեսված դրամական եկամուտներ՝ 296878.0 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 293776.1 հազ.դրամ:Որից՝

-պետական պատվերով նախատեսված՝ 268852.0 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 267363.0 հազ. դրամ /1489.0 հազ.դրամ թերակատարում/:

-վճարովի ծառայություններ՝ նախատեսված՝ 26751.0 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 24545.3 հազ.դրամ /2205.7 հազ.դրամ թերակատարում/::

- այլ եկամուտներ՝ նախատեսված՝ 1275.0 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 1867.8 հազ.դրամ:

- տարվա սկզբի դրամական մնացորդ՝ 2103.4 հազ.դրամ:

- տարվա վերջի դրամական մնացորդ՝ 1952.0 հազ.դրամ:

01.01.2016թ.-ի դրությամբ ընկերության դեբիտորական պարտքը կազմում է 647.7 հազ. դրամ:

Ընկերությունը աշխատել է 779.8 հազ. դրամ հարկային շահույթով:

01.01.2016թ.-ի դրությամբ ընկերությունը ունի 14589.2 հազ.դրամ կուտակված կրեդիտորական պարտքեր, որից դրամական ազատ միջոցներով չի ապահովված 11989.5 հազ.դրամը:

Ընկերության սեփական կապիտալի և կանոնադրական կապիտալի հարաբերակցությունը կազմում է - 300.0 հազ.դրամ/սեփական կապիտալը ավելի փոքր է /:

Կազմակերպությունը սպասարկել է 14390 բնակիչ: Համաձայն գլոբալ բյուջեի՝ հաշվառված բնակիչների թիվը կազմում է 14390 բնակիչ, որից մեծահասակներ՝ 10860 բնակիչ և մինչև 18 տարեկաններ՝ 3530 բնակիչ, որը բուժական անձնակազմի աշխատավարձի հաշվարկի հիմք է հանդիսացել: Մեր հաշվարկով հաշվառման քարտերը ամբողջությամբ առկա են, ինչպես նաև նրանցում այցելությունների մասին գրանցումները: Աուդիտի է ենթարկվել պետական պատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունների արժանահավատությունը: Աուդիտի իրականացման ընթացքում կատարեցինք բնակիչներին՝ տեղամասային թերապևտների կողմից այցելության կամ տեղում սպասարկման վերաբերյալ ամբուլատոր քարտերում սկրինինգի գրանցումների առկայության ընտրանքային աուդիտ: Պարզեցինք, որ մեծահասակների ամբուլատոր քարտերի 105 ընտրանքում 12 քարտում առկա չէ սկրինինգի գրանցում, որը կազմում է ընտրանքի 11 տոկոսը:

<<Եղեգնածորի ԲԿ>> ՓԲԸ-ում ըստ հաշվետվության, եկամուտների՝ 91.0 տոկոսը ձևավորվել է պետական պատվերի շրջանակներում, 8.4 տոկոսը գոյացել է վճարովի ծառայություններից և 0.6 տոկոսը՝ այլ եկամուտներից: Ծախսումներում աշխատավարձի և աշխատավարձին հավասարեցված այլ վճարների տեսակարար կշիռը կազմում է 81.6 տոկոս, անցած ժամանակահատվածի 80.7 տոկոսի դիմաց /ողջամիտ ծախս է համարվում միջինը 70 տոկոս միջակայքը/, դեղորայք և լաբորատոր նյութեր հոդվածով ընդամենը 8.2 տոկոս, այլ ծախսերը կազմում են 10.2 տոկոս: Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների տեսակարար կշիռը բարձր է, որը հնարավորություն չի տալիս ընկերությանը լիարժեքորեն իրականացնել իր գործունեությունը:

Իրականացվել է դեղորայքի և վիրակապական նյութերի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ և կատարողականի աուդիտ:

Համապատասխանության աուդիտ: Գնման գործընթացը ներառում է գնումների պլանավորումը, գնումների նախապատրաստումը, պայմանագրի կնքումը: Առկա է գնումների պլանը, որը սահմանված կարգով կազմվել է և ներկայացվել ՀՀ Վայոց ձորի մարզպետարան:

Գնումների նախապատրաստում: Սահմանվել է գնումները իրականացնել ՀՀ գնման ընթացակարգով: Գնումների նախապատրաստման համար մարմնի ղեկավարը սահմանել է գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով: ՀՀ-ում ներառված բոլոր հնարավոր մասնակիցներին ուղարկվել է գնման հրավեր, որում ներառվել են ապրանքների տեխնիկական բնութագրերը, անվանացանկը: Սահմանված կարգով գնման հայտ են ներկայացրել 14 ընկերություններ՝

«Արմեն ֆարմ» ՍՊԸ-ն, «Ալֆա-ֆարմ» ՓԲՆ-ն, «Ռիխտեր-Լամբրոն» ՀԶ ՍՊԸ-ն, «Խաչպար» ՍՊԸ-ն, «Արֆարմացիա» ՓԲԸ-ն, «Լևոն և Լամար» Դեղատուն ՍՊԸ-ն, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, «Ֆարմեգուա» ՍՊԸ-ն, «Վազա ֆարմ» ՍՊԸ-ն, «Լեյկոալբես» ՍՊԸ-ն, «Կոտայք» ՍՊԸ-ն, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն, «Մեդիտեք» ՍՊԸ-ն և «Դելտա» ՍՊԸ-ն: Հայտերը գրանցվել են գրանցամատյանում: Հայտերի բացման օրը և ժամին հայտերը բացվել են գնահատող հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովը արձանագրել է նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները: Գնային առաջարկների հիման վրա, գնային նվազագույն առաջարկի սկզբունքով, ըստ չափաբաժինների հաղթող են ճանաչվել նշված կազմակերպությունները, կազմելով համապատասխան արձանագրություն: Հաղթող ընկերություններին ուղարկվել է համապատասխան գրություններ, հաղթող ճանաչվելու մասին պայմանագիր կնքելու համար, կցելով պայմանագրի նախագիծը, միակողմանի տուժանքի պայմանագրի առկայության պայմաններում: Ընկերությունների կողմից ներկայացվել է միակողմանի տուժանքի մասին համաձայնություններ, որոնց առկայության պայմաններում կնքվել են համապատասխան գնման պայմանագրեր:

Կատարողականի աուդիտ: Գնումներ իրականացնելու համար կազմվել են գնման և վճարման ժամանակացույցեր:

«Արմեն ֆարմ» ընկերության հետ կնքվել է 3463420 դրամի գնման պայմանագիր, «Ալֆա-ֆարմ» ընկերության հետ կնքվել է 429185 դրամի գնման պայմանագիր, «Ռիխտեր-Լամբրոն» ընկերության հետ կնքվել է 664503 դրամի գնման պայմանագիր, «Խաչպար» ընկերության հետ կնքվել է 4680 դրամի գնման պայմանագիր, «Արֆարմացիա» ընկերության հետ կնքվել է 935535 դրամի գնման պայմանագիր, «Լևոն և Լամար» Դեղատուն ընկերության հետ կնքվել է 73820 դրամի գնման պայմանագիր, «Նատալի Ֆարմ» ընկերության հետ կնքվել է 14402340 դրամի գնման պայմանագիր, «Ֆարմեգուա» ընկերության հետ կնքվել է 1384510 դրամի գնման պայմանագիր, «Վազա ֆարմ» ընկերության հետ կնքվել է 3003890 դրամի գնման պայմանագիր, «Լեյկոալբես» ընկերության հետ կնքվել է 1238210 դրամի գնման պայմանագիր, «Կոտայք» ընկերության հետ կնքվել է 708360 դրամի գնման պայմանագիր, «Մեդտեխսերվիս» ընկերության հետ կնքվել է 717500 դրամի գնման պայմանագիր, «Մեդիտեք» ընկերության հետ կնքվել է 1359800 դրամի գնման պայմանագիր և «Դելտա» ընկերության հետ կնքվել է 207700 դրամի գնման պայմանագիր:

Փոխադարձ համաձայնությամբ «Արմեն ֆարմ» ընկերությունից կատարվել է 1548410 դրամի գնում, «Ալֆա-ֆարմ» ընկերությունից կատարվել է 208730 դրամի գնում, «Ռիխտեր-Լամբրոն» ընկերությունից կատարվել է 661460 դրամի գնում, «Խաչպար» ընկերությունից կատարվել է 4680 դրամի գնում, «Արֆարմացիա» ընկերությունից կատարվել է 690199 դրամի գնում, «Լևոն և Լամար» Դեղատուն ընկերությունից կատարվել է 73820 դրամի գնում, «Նատալի Ֆարմ» ընկերությունից կատարվել է 14665682 դրամի գնում, «Ֆարմեգուա» ընկերությունից կատարվել է 1283270 դրամի գնում, «Վազա ֆարմ» ընկերությունից կատարվել է 2005763 դրամի գնում, «Լեյկոալբես» ընկերությունից կատարվել է 1436515 դրամի գնում, «Կոտայք» ընկերությունից

կատարվել է 428949 դրամի գնում, <<Մեդոտեխսերվիս>> ընկերությունից կատարվել է 795360 դրամի գնում, <<Մեդիտեք>> ընկերությունից կատարվել է 367600 դրամի գնում և <<Դելտա>> ընկերությունից կատարվել է 156500 դրամի գնում, որը կազմակերպության բնականոն գործունեության վրա ընթացիկ շրջանառու միջոցներով ապահովվածության ցուցանիշի մասով ազդեցությունն չի ունեցել: 2 գործակցի դիմաց այն կազմում է 5.1: Տնտեսվել է 4266515 դրամ գումար:

Սահմանվել և իրականացվել է բենզինի գնումը ՇՀ գնման ընթացակարգով: Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել <<Ֆլեշ>> ՍՊԸ-ն, որն էլ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել 4700 լ. 450 դրամ և 5500 լ. 420 դրամ մեկ միավոր գնային առաջարկով: Կնքվել է 10200 լ. բենզինի գնման պայմանագիր 4257.0 հազ.դրամ ընդհանուր գումարով:

Սահմանվել և իրականացվել է տնտեսական, սանհիգիենիկ և լվածքի միջոցների գնում ՇՀ գնման ընթացակարգով: Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել <<Եղեգնաձորի սպիտակ տուն>> ԱԿ-ն, որն էլ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել: Կնքվել է 1297000 դրամի գնման պայմանագիր: Նախահաշվով նախատեսվել է 1420000 դրամի գնում: Տնտեսվել է 123.0 հազ.դրամ:

Սահմանվել և իրականացվել է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում և պահեստամասերի գնում ՇՀ գնման ընթացակարգով: Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել <<Վիվեկա>> ՍՊԸ-ն, որն էլ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել: Կատարվել է 965000 դրամի գնում: Նախահաշվով նախատեսվել է 965000 դրամի գնում:

Աուդիտի ընթացքում կատարվեց գույքի, մասնավորապես դեղորայքի և վիրակապական նյութերի անվտանգ պահպանման աուդիտ: Դեղորայքի պահպանումը համապատասխանում է << Առողջապահության նախարարի 28.12.2005թ.-ի թիվ 1391-Ա Բժշկական հաստատություններում /հիվանդանոցներում/ դեղերի ու բժշկական նշանակության այլ ապրանքների ստացման, պահպանման, ձեռք բերման, հաշվառման և բաշխման կարգին:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանս, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանս, Հ.Ավետիսյանս և Խ.Խաչատրյանս իրականացրեցին <<Եղեգնաձորի ԲԿ>> Փակ բաժնետիրական ընկերության 2015թ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2016թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորենք և իրականացնենք, որպեսզի ունենանք ողջամիտ հավաստում, որ ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները արժանահավատ են, էական խեղաթյուրումներից զերծ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված ձևով՝ ֆինանսական հաշվետվությունների հիմունքների պահանջներին համապատասխան: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության առողջացման ծրագրի շրջանակներում, 2016 թ.-ի երկրորդ կիսամյակում, թվով երկու հաստիքների կրճատման և աշխատավարձի վերահաշվարկի արդյունքում ընկերությունը ակնկալում է տնտեսել 11089.5 հազ.դրամ: Առ 01.08.2016թ.-ի դրությամբ ընկերության դրամական մնացորդը կազմում է 442.4 հազ.դրամ, դեբիտորական պարտքը՝ 1114.0 հազ. դրամ. կրեդիտորական պարտքը՝ 10205.0 հազ.դրամ, որից դրամական ազատ միջոցներով չի ապահովված 8648.6 հազ.դրամը: Կրեդիտորական պարտքերի դրամական ազատ միջոցներով չապահովվածության դրական տեղաշարժը կազմում է 3340.0 հազ.դրամ/11989-8649=3340/: Ընկերության շահույթով աշխատելով պայմանավորված հաշվեկշռային կուտակված վնասը նվազել է 312.0 հազ. դրամով: Արդյունքում փաստացի և ակնկալվող օգուտով աշխատելու պայմաններում մարվում է ընկերության կուտակված հաշվեկշռային վնասը, որով մարվում է սեփական կապիտալի և կանոնադրական կապիտալի հարաբերակցության բացասական սալդոն:

Եզրակացություն՝ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության առողջացման ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ընկերությունը կաշխատի օգուտով:

Արձանագրված թերություններ և խախտումներ: Ընկերության սեփական կապիտալի և կանոնադրական կապիտալի հարաբերակցությունը կազմում է – 300.0 հազ.դրամ:

Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ հոդվածով նախահաշվային գումարից ավել է ծախսվել 2830.3 հազ.դրամ, էլ. էներգիայի ծախսեր հոդվածով՝ 30.4 հազ.դրամ:

Ծախսերի մեջ աշխատավարձի տեսակարար կշիռը սահմանված ողջամիտ միջին ցուցանիշից բարձր է 11.6 տոկոսով /այն կազմում է 81.6 տոկոս միջինը 70 տոկոսի դիմաց/:

Դրամական եկամուտները թերակատարվել են 3694.7 հազ.դրամի չափով:

Մեծահասակների ամբուլատոր քարտերի 105 ընտրանքում 12 քարտում առկա չէ սկրինինգի գրանցում, որը կազմում է ընտրանքի 11 տոկոսը: << առողջապահության նախարարի 13 սեպտեմբերի 2013թ. N47-Ն հրամանի պահանջները մասնակիորեն չեն իրականացվել:

Աուդիտի արդյունքում առաջացել է 301.0 հազ.դրամի պետության շահաբաժնի լրացուցիչ պարտավորություն, որը ենթակա է փոխանցման ՀՀ պետական բյուջե:

Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները, խախտումները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց ՓԲԸ-ի տնօրենին՝

ա/ Թույլ չտալ նախահաշվով նախատեսված գումարներից ավել ծախսումներ: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

բ/ Անհրաժեշտ ենք համարում նախատեսված պետական պատվերով և վճարովի բժշկական ծառայությունները կատարել ամբողջ ծավալով: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

գ/ Ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 13 սեպտեմբերի 2013թ. Թիվ 47-Ն հրամանի պահանջներով և պետական պատվերի շրջանակներում բժշկական ծառայությունները /սկրինինգները/ կատարել ամբողջ ծավալով: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

դ/ 301.0 հազ.դրամի պետության շահաբաժնի լրացուցիչ պարտավորության գումարը փոխանցել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին:


Առաջարկությունների կատարման վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն 1-ամսյա պարբերականությամբ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝

Ներքին աուդիտորներ՝

<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ -ի տնօրեն՝

Հաշվապահ՝





Վ. Կարապետյան
Ն. Կարապետյան
Ա. Ավետիսյան
Խ. Խաչատրյան
Ա. Կարապետյան
Ս. Ավետիսյան